5871
09.11.2015թ.

ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ՋԵՐՄՈՒԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ

ԱՎԱԳԱՆՈՒ

2015 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 30 –Ի ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏՈՒՄ
ԸՆԴՈՒՆՎԱԾ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ն Ե Ր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ
Ա Վ Ա Գ Ա Ն Ի

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

30 հոկտեմբերի 2015թ. N 33-Ա

ՋԵՐՄՈՒԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 30-Ի ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ մասին համապատասխան ավագանին **ո ր ո շ ու մ է՝**

1. Հաստատել Ջերմուկի համայնքի ավագանու 2015 թվականի հոկտեմբերի 30-ի արտահերթ նիստի հետևյալ օրակարգը.

1.1. Ջերմուկի համայնքի 2015 թվականի բյուջեում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին.

զեկ. քաղաքապետարանի աշխատակազմի ֆինանսական բաժնի պետ Ա. Ղազարյան

1.2. Ջերմուկի քաղաքային համայնքին ընթացիկ սուբվենցիայի տրամադրման պայմանագրի համաձայն անհրաժեշտ ծախսերի բաշխման մասին.

զեկ. քաղաքապետարանի աշխատակազմի ֆինանսական բաժնի պետ Ա. Ղազարյան

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Ավագանու անդամներ՝

ազգանուն, անուն	կողմ	դեմ	ձեռնպահ
Այվազյան Առուշան Մկրտիչի			
Արսենյան Արմինե Արագեղեցիկի	բացակա		
Բագրատյան Արտակ Կառլենի	բացակա		
Խանամիրյան Բագրատ Սենիկի	բացակա		
Համբարձումյան Մխիթար Սամվելի			
Հովակիմյան Ազատ Հայրիկի	բացակա		
Հովակիմյան Հարություն Հայրիկի			

Հովհաննիսյան Գևորգ Վարդանի			
Մկրտչյան Մայիս Վարանցովի			
Պողոսյան Արթուր Վահրամի			
Ստեփանյան Վիգեն Արշակի	բացակա		

Որոշումն ընդունված է՝ կողմ- .....6..... դեմ-.....0..... ձեռնպահ- ..0...

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

2015 հոկտեմբերի 30
Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ ՋԵՐՄՈՒԿԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ

30 հոկտեմբերի 2015թ. N 34-Ն

ՋԵՐՄՈՒԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ կետին, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածին համապատասխան, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2006թվականի նոյեմբերի 16-ի «Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից համայնքներին սուբվենցիաների տրամադրման կարգը հաստատելու մասին» N 1708-Ն և 2015թ. հոկտեմբերի 22-ի «Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզպետարանին գումար հատկացնելու մասին» N 1227-Ա որոշումներով՝ ավագանին **ո ր ո շ ու մ է՝**

1. Համաձայնություն տալ Ջերմուկի համայնքի ղեկավարի՝ Ջերմուկի համայնքի 2015 թվականի բյուջեի փոփոխությունների մասին առաջարկությանը:

2. Ջերմուկի քաղաքային համայնքի 2015 թվականի վարչական բյուջեի եկամտային մասում կատարել հետևյալ փոփոխությունները.

2.1. Բաժին 37, խումբ 04-00 գործառնական նշանակության «Պետական բյուջեից ընթացիկ ծախսերի ֆինանսավորման նպատակով» հոդվածը ավելացնել 29000.0 հազար ՀՀ դրամով:

Ընդամենը վարչական բյուջեի եկամտային մաս՝ 250012.0 հազար ՀՀ դրամ

2.2. Ջերմուկի քաղաքային համայնքի 2015 թվականի վարչական բյուջեի ծախսային մասում կատարել հետևյալ փոփոխությունները.

2.2.1.Բաժին 05. խումբ 01, դաս 01, ծրագիր 51-210002 - «աղբահանություն և սանիտարական մաքրում» գործառնական նշանակության ծախսերի կատարման նախահաշվի 4638 (այլ ընթացիկ դրամաշնորհներ առևտրային կազմակերպություններին) տնտեսագիտական հոդվածը ավելացնել 9798.0 հազար ՀՀ դրամով:

2.2.2. Բաժին 01. խումբ 06, դաս 01, ծրագիր 60-210002 «գույքի նկատմամբ իրավունքների գրանցում» գործառնական նշանակության ծախսերի կատարման նախահաշվի 4241 (մասնագիտական ծառայություններ) տնտեսագիտական հոդվածը ավելացնել 50.0 հազար ՀՀ դրամ:

2.2.3. Բաժին 08. խումբ 04, դաս 01, ծրագիր 51-210002 «երիտասարդական ծրագրեր» գործառնական նշանակության ծախսերի կատարման նախահաշվի 4637 (այլ ընթացիկ դրամաշնորհներ ՀՈԱԿ-ներին) տնտեսագիտական հոդվածը ավելացնել 430.0 հազար ՀՀ դրամով:

2.2.4. Բաժին 01. խումբ 03, դաս 03, ծրագիր 55-210002 «ընդհանուր բնույթի այլ ծառայություններ» գործառնական նշանակության ծախսերի կատարման նախահաշվի 4232 (համակարգչային ծառայություններ) տնտեսագիտական հոդվածը ավելացնել 18.0 հազար ՀՀ դրամով:

2.2.5. Բաժին 10. խումբ 07, դաս 01, ծրագիր 54-210002 «սոցիալապես անապահով անձանց աջակցություն» գործառնական նշանակության ծախսերի կատարման նախահաշվի 4729 (այլ նպաստներ բյուջեից) տնտեսագիտական հոդվածը ավելացնել 85.0 հազար ՀՀ դրամ:

2.2.6. Բաժին 01. խումբ 01, դաս 01, ծրագիր 51-210002 «օրենսդիր և գործադիր մարմիններ, պետական կառավարում» գործառնական նշանակության ծախսերի կատարման նախահաշվի 4111 (աշխատավարձ և նրան հավասարեցված վճարումներ), 4212 (էներգետիկ ծախսեր), 4214 (կապի ծառայություններ), 4264 (տրանսպորտային նյութեր) և 4237 (ներկայացուցչական ծախսեր) տնտեագիտական հոդվածները համապատասխանաբար ավելացնել 2700.0 հազար ՀՀ դրամով, 2770.0 հազար ՀՀ դրամով, 32.0 հազար ՀՀ դրամով, 606.0 հազար ՀՀ դրամով և 264.0 հազար ՀՀ դրամով:

2.2.7. Բաժին 08. խումբ 02, դաս 01, ծրագիր 51-210002 «գրադարանային ծառայություններ» գործառնական նշանակության ծախսերի կատարման նախահաշվի 4212 (էներգետիկ ծախսեր) և 4213 (կոմունալ ծառայություններ) տնտեսագիտական հոդվածները համապատասխանաբար ավելացնել 300.0 հազար ՀՀ դրամով և 26.0 հազար ՀՀ դրամով:

2.2.8. Բաժին 04. խումբ 05, դաս 05, ծրագիր 53-210002 «խողովակաշարային տրանսպորտ» գործառնական նշանակության ծախսերի կատարման նախահաշվի 4212 (էներգետիկ ծախսեր), 4213 (կոմունալ ծառայություններ), 4111 - «աշխատավարձ և նրան հավասարեցված վճարումներ», 4235 - «կառավարչական ծառայություններ» տնտեսագիտական հոդվածները համապատասխանաբար ավելացնել 1310.0 հազար ՀՀ դրամով, 50.0 հազար ՀՀ դրամով, 1138.0 հազար ՀՀ դրամով և 10.0 հազար ՀՀ դրամով :

2.2.9. Բաժին 09. խումբ 01, դաս 01, ծրագիր 51-210002 «նախադպրոցական դաստիարակություն» գործառնական նշանակության ծախսերի կատարման նախահաշվի 4637 (ընթացիկ դրամաշնորհներ համայնքային ոչ առևտրային կազմակերպություններին) տնտեսագիտական հոդվածը ավելացնել 5616.0 հազար ՀՀ դրամով:

2.2.10. Բաժին 09. խումբ 05, դաս 01, ծրագիր 51-210002 «մշակույթ, սպորտ, կրոն» գործառնական նշանակության ծախսերի կատարման նախահաշիվների 4637 (ընթացիկ դրամաշնորհներ համայնքային ոչ առևտրային կազմակերպություններին) տնտեսագիտական հոդվածը ավելացնել 3797.0 հազար ՀՀ դրամով:

Ընդամենը վարչական բյուջեի ծախսային մաս - 250012.0 հազար ՀՀ դրամ:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող տասներորդ օրը:

Ավագանու անդամներ՝

ազգանուն, անուն	կողմ	դեմ	ձեռնպահ
Այվազյան Առուշան Մկրտիչի			
Արսենյան Արմինե Արագեղեցիկի	բացակա		
Բագրատյան Արտակ Կառլենի	բացակա		
Խանամիրյան Բագրատ Սենիկի	բացակա		
Համբարձումյան Մխիթար Սամվելի			
Հովակիմյան Ազատ Հայրիկի	բացակա		
Հովակիմյան Հարություն Հայրիկի			
Հովհաննիսյան Գևորգ Վարդանի			
Մկրտչյան Մայիս Վարանցովի			
Պողոսյան Արթուր Վահրամի			
Ստեփանյան Վիգեն Արշակի	բացակա		

Որոշումն ընդունված է՝ կողմ- ....6..... դեմ-.....0..... ձեռնպահ- ....0.

/ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Վ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

2015 հոկտեմբերի 30
Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ ՋԵՐՄՈՒԿԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ

30 հոկտեմբերի 2015թ. N 35-Ն

ՋԵՐՄՈՒԿԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻՆ ԸՆԹԱՑԻԿ ՍՈՒԲՎԵՆՑԻԱՅԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՀԱՄԱՁԱՅՆ ԱՆՀՐԱԺԵՇՏ ԾԱԽՍԵՐԻ ԲԱՇԽՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի նոյեմբերի 16-ի «Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից համայնքներին սուբվենցիաների տրամադրման կարգը հաստատելու մասին» N 1708-Ն և 2015 թվականի հոկտեմբերի 22-ի «Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզպետարանին գումար հատկացնելու մասին» N 1227-Ա որոշումներով, 2015 թվականի հոկտեմբերի 29-ին Վայոց Ձորի մարզպետարանի և Ջերմուկի քաղաքապետարանի միջև կնքված N 09 ընթացիկ սուբվենցիայի հատկացման պայմանագրի համաձայն ավագանին **որոշում է՝**

1. Ջերմուկի քաղաքային համայնքի բնականոն գործունեությունն ապահովելու նպատակով՝ նախորդ տարիներին առաջացած պարտքերը վճարելու և Ջերմուկ քաղաքի զարգացման ծրագրի իրականացման միջոցառումներին աջակցելու համար Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից տրամադրված 29000.0 հազար ՀՀ դրամը բաշխել հետևյալ ուղղություններով.

1.1. Բաժին 01. խումբ 01, դաս 01, ծրագիր 51-210002 «օրենսդիր և գործադիր մարմիններ, պետական կառավարում» գործառնական նշանակության ծախսերի կատարման նախահաշվի 4111 (աշխատավարձ և նրան հավասարեցված վճարումներ) տնտեսագիտական հոդվածին ուղղել 3335.3 հազար ՀՀ դրամ:

1.2. Բաժին 09, խումբ 05, դաս 01, ծրագիր 51-210002 «մշակույթ, սպորտ, կրոն» գործառնական նշանակության «մանկապատանեկան մարզադպրոց» բյուջետային հիմնարկի ծախսերի կատարման նախահաշվի 4111 (աշխատավարձ և նրան հավասարեցված վճարումներ) տնտեսագիտական հոդվածին ուղղել 595.4 հազար ՀՀ դրամ:

1.3. Բաժին 08, խումբ 02, դաս 01, ծրագիր 51-210002 « գրադարանային ծառայություններ» գործառնական նշանակության «Ջերմուկի համայնքի քաղաքային գրադարան» բյուջետային հիմնարկի ծախսերի կատարման նախահաշվի 4111 (աշխատավարձ և նրան հավասարեցված վճարումներ) տնտեսագիտական հոդվածին ուղղել 745.5 հազար ՀՀ դրամ:

1.4. Բաժին 04, խումբ 05, դաս 05. ծրագիր 53-210002 «խողովակաշարային տրանսպորտ» գործառնական նշանակության «Ջերմուկի համայնքի ճոպանուղի» բյուջետային հիմնարկի ծախսերի կատարման նախահաշվի 4111 (աշխատավարձ և նրան հավասարեցված վճարումներ) տնտեսագիտական հոդվածին ուղղել 3060.0 հազար ՀՀ դրամ:

1.5. Բաժին 09, խումբ 01, դաս 01, ծրագիր 51-210002 « նախադպրոցական դաստիարակություն» գործառնական նշանակության «Ջերմուկի քաղաքային համայնքի «ՋԱՏԻԿ» մանկապարտեզ ՆՈՒՀ» ՀՈԱԿ-ի ծախսերի կատարման նախահաշվի 4637 (ընթացիկ դրամաշնորհներ համայնքային ոչ առևտրային կազմակերպություններին) տնտեսագիտական հոդվածին ուղղել 6260.0 հազար ՀՀ դրամ:

1.6. Բաժին 09, խումբ 05, դաս 01, ծրագիր 51-210002 «մշակույթ, սպորտ, կրոն» գործառնական նշանակության «Ջերմուկի համայնքի արվեստի N 1 դպրոց» ՀՈԱԿ-ի ծախսերի կատարման նախահաշվի 4637 (ընթացիկ դրամաշնորհներ համայնքային ոչ առևտրային կազմակերպություններին) տնտեսագիտական հոդվածին ուղղել 2500.0 հազար ՀՀ դրամ:

1.7. Բաժին 09, խումբ 05, դաս 01, ծրագիր 51-210002 « մշակույթ, սպորտ, կրոն» գործառնական նշանակության «Ջերմուկի համայնքի արվեստի N 2 դպրոց» ՀՈԱԿ-ի ծախսերի կատարման նախահաշվի 4637 (ընթացիկ դրամաշնորհներ համայնքային ոչ առևտրային կազմակերպություններին) տնտեսագիտական հոդվածին ուղղել 4474.0 հազար ՀՀ դրամ:

1.8. Բաժին 09, խումբ 05, դաս 01, ծրագիր 51-210002 «մշակույթ, սպորտ, կրոն» գործառնական նշանակության «Ջերմուկի համայնքի Կ. Ա. Ասրյանի անվան շախմատի դպրոց» ՀՈԱԿ-ի ծախսերի կատարման նախահաշվի 4637 (ընթացիկ դրամաշնորհներ համայնքային ոչ առևտրային կազմակերպություններին) տնտեսագիտական հոդվածին ուղղել 350.0 հազար ՀՀ դրամ:

1.9. Բաժին 08, խումբ 04, դաս 01, ծրագիր 51-210002 «երիտասարդական ծրագրեր» գործառնական նշանակության «Ջերմուկի երիտասարդական կենտրոն» ՀՈԱԿ-ի ծախսերի կատարման նախահաշվի 4637 (ընթացիկ դրամաշնորհներ համայնքային ոչ առևտրային կազմակերպություններին) տնտեսագիտական հոդվածին ուղղել 200.0 հազար ՀՀ դրամ:

1.10. Բաժին 05, խումբ 01, դաս 01, ծրագիր 51-210002 «աղբահանություն և սանիտարական մաքրում» գործառնական նշանակության ծախսերի կատարման նախահաշվի 4638 (ընթացիկ դրամաշնորհներ համայնքային առևտրային կազմակերպություններին) տնտեսագիտական հոդվածին ուղղել 7479.8 հազար ՀՀ դրամ:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող տասներորդ օրը:

Ավագանու անդամներ՝

ազգանուն, անուն	կողմ	դեմ	ձեռնպահ
Այվազյան Առուշան Մկրտիչի			
Արսենյան Արմինե Արագեղեցիկի			
Բագրատյան Արտակ Կառլենի			
Խանամիրյան Բագրատ Սենիկի			
Համբարձումյան Մխիթար Սամվելի			

Հովակիմյան Ազատ Հայրիկի	բացակա			
Հովակիմյան Հարություն Հայրիկի				
Հովհաննիսյան Գևորգ Վարդանի				
Մկրտչյան Մայիս Վարանցովի				
Պողոսյան Արթուր Վահրամի				
Ստեփանյան Վիգեն Արշակի	բացակա			

Որոշումն ընդունված է՝ կողմ- .....6..... դեմ-.....0..... ձեռնպահ- 0

/ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

2015 հոկտեմբերի 30
Ջերմուկ